# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2026թ. թիվ 65-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2026 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

Մինչև 2026 թվականի հունվարի 31-ը սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի համաձայն մշակել ու հաստատել համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2026 թվականի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանը:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

4. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետին:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հունվարի 23
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2026թ. հունվարի 23-ի
թիվ 65-Ա որոշման

# Պ Լ Ա Ն
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխա-նատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշում-ներ |
|---|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* |
| **I. ՆԳՆ ՓԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **1.Օպերատիվ տակտիկական պատրաստություն** | | | | | | |
| **1.1 Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 1.1.1 | Մասնակցություն «Լոռու մարզում ջրհեղեղի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպմանը» թեմայով ՀՇՈՒ-ին | Մայիս | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՔՊԲՎ | Լոռու ՄՓՎ, Մարզի արձագանքող ստորաբաժանումներ, մարզպետի աշխատակազմ, կազ-մակերպություններ | |
| **1.2 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 1.2.1 | Մասնակցություն «Կարճ հաղորդագրություններով ՀՀ Լոռու մարզում պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով ՀՇՈՒ-ին | Հունիս, դեկտեմբեր | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Համապատասխան պաշտոնատար անձինք | |
| **2. Ընդհանուր պատրաստություն** | | | | | | |
| 2.1 | Մասնակցություն Երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետներին դիմակայունության օրվա 38-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպմանը և համակարգմանը | 04-11.12 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **3. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 3.1 | ՀՀ տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՓՈԻՎ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| | 1) ՀՀ համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | | ՓՈԻՎ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| | 2) Ավստրիական և Հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում առաջին արձագանքման կամավորական ծառայության ինստիտուցիոնալիզացում» (VOLFIRE) ծրագրի շրջանակներում նոր կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | | ՓՈԻՎ | ՄՓՎ ստորաբաժանումներ | |
| **II ՆԳՆ ՓԾ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **4. Օպերատիվ տակտիկական պատրաստություն** | | | | | | |
| **4.1 Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 4.1.1 | «ՀՀ Լոռու մարզում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և իրականացում» | 11.12 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ, տարահանման հանձնաժողով, համապատասխան համայնքներ և կազմակերպություններ | |
| **4.2 Շտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 4.2.1 | «ՀՀ Լոռու մարզի անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով | 30.10 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ, տարահանման հանձնաժողով, համապատասխան համայնքներ և կազմակերպություններ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **4.3 Համայնքների կողմից անցկացվող շտաբային ուսումնավարժություններ** | | | | | | |
| 4.3.1 | Մասնակցություն Լոռու մարզի համայնքների կողմից շտաբային ուսումնավարժությունների անցկացմանը | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ, համայնքի ղեկավար | Համայնքի ղեկավար կազմ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | Մասնակցություն Ստեփանավան համայնքում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 17.08 | | | | |
| | Մասնակցություն Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր  բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 18.08 | | | | |
| | Մասնակցություն Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 19.08 | | | | |
| | Մասնակցություն Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 20.08 | | | | |
| | Մասնակցություն Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 21.08 | | | | |
| | Մասնակցություն Գյուլագարակ համայնքի Պուշկինո բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 24.08 | | | | |
| | Մասնակցություն Գյուլագարակ համայնքի Կուրթան բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և | 25.08 | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | իրականացում» թեմայով ՇՈւ-ին | | | | | |
| | Մասնակցություն Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 26.08 | | | | |
| | Մասնակցություն Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 27.08 | | | | |
| | Մասնակցություն Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրում «ՀՀ Լոռու մարզի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով ՇՈւ-ին | 28.08 | | | | |
| **4.4 Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 4.4.1 | Լոռու մարզի Սպիտակ համայնքում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացում | 29.05 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ, համապատասխան կազմակերպություններ | |
| **4.5 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 4.5.1 | ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ մարզի հանրակրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների և դասախոսությունների անցկացում | 02-06.03 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան հաստատությունների անձնակազմ | |
| 4.5.2 | «Աղետներին դիմակայունության օր» խորագրով համապետական միջոցառումների անցկացում | 07-10.12 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան հաստատությունների անձնակազմ | |
| 4.5.3 | «Փրկարարի օրվա» կապակցությամբ, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների, դասախոսությունների, սեմինարների անցկացում | 04-10.09 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Համապատասխան հաստատությունների անձնակազմ | |
| **4.6 Գործնական պարապմունքներ** | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4.6.1 | Լոռու մարզի համայնքներում ՔՊ թեմաներով գործնական պարապմունքների իրականացում՝ էլեկտրական շչակների գործարկմամբ | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ, համայնքի ղեկավար | ՏԻՄ ղեկավար կազմ, ՄՓՎ ստորաբա-ժանումներ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմակերպությունների հրամանատարներ | |
| | Ձյունաշողի միջնակարգ դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 23.01 | | | | |
| | Արջուտի միջնակարգ դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 20.02 | | | | |
| | Մարգահովիտի միջնակարգ դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 27.03 | | | | |
| | Շամլուղի միջնակարգ դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 23.04 | | | | |
| | Հաղպատի միջնակարգ դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 15.05 | | | | |
| | Ջիլիզա բնակավայրում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 26.06 | | | | |
| | Լերմոնտովոյի միջնակարգ դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 18.09 | | | | |
| | Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 23.10 | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Վանաձորի թիվ 17 ավագ դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 13.11 | | | | |
| | Սպիտակի թիվ 3 հիմնական դպրոցում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ | 18.12 | | | | |
| | **5. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | |
| 5.1 | ՆԳ ՓԾ տարածքային ստորաբաժանումների ծառայողների և ՀՀ մարզերի մարզպետի աշխատակազմերի կրթության և գիտության ոլորտի մասնագետների հետ կրթական հաստատություններում (դպրոցներում) պատանի (12-ից 17 տարեկան) հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծման գործընթացի համակարգում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| | 1) ՀՀ մարզերում և Երևան քաղաքում պատանի հրշեջ-փրկարարական թիմերի միջև մարզային առաջնությունների կազմակերպում և անցկացում | Ապրիլ | | | | |
| | 2) Պատանի հրշեջ-փրկարարական թիմերի հանրապետական առաջնության անցկացում | Մայիս | | | | |
| | 3) Պատանի հրշեջ-փրկարարական թիմերի ստեղծման և ուսուցման կազմակերպման վերաբերյալ զեկույցի ներկայացում | 14.12 | | | | |
| | **6. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ** | | | | | |
| 6.1 | Գարնանային վարարումների և սելավների ռիսկերից ՀՀ բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով՝ | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| | 1) ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 183-Ա 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 68-Ն որոշման 5-րդ կետի՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՓԾ ՔԲՊՎ | Մինչև 16.02 | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6.2 | ՀՀ վարչապետի 2012 թվականի ապրիլի 10-ի թիվ 325-Ա որոշմամբ ստեղծված հանրապետական հանձնաժողովին արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում | Յուրաքանչյուր ամսվա 28-ը՝ նախորդ ամսվա | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 6.3 | ՀՀ Լոռու մարզի տարածքում գտնվող քիմիապես վտանգավոր օբյեկտների և հիդրոտեխնիկական կառույցների (պոչամբարների, ջրամբարների) անվտանգության վկայագրերի հաշվառման, ռիսկերի գնահատման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 6.4 | ՀՀ Լոռու մարզի տարածքում քիմիապես վտանգավոր օբյեկտների, ինչպես նաև քիմիական թափոնների անվտանգ կառավարման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| | **7. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | |
| 7.1 | Ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանության վիճակի ուսումնասիրությունների անցկացում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 7.2 | Վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի հրապարակման ոչ ենթակա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում և համակարգում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 7.3 | ՓԾ տնօրենի 30.04.2021թ. N Ն/11.6.5/21137-2021 և 12.10.2021թ. N Ն/11.6/54150-2021 հանձնարարականների կատարումն ապահովելու նպատակով մարզերի (Երևան քաղաքի) բազմաբնակարան շենքերի, մասնավոր տների, կազմակերպությունների նկուղային հարկերի վիճակի ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| | **8. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | |
| 8.1 | ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2027 թվականի հիմնական միջոցառումների պլանների մշակում | Մինչև 23.11 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8.2 | Համայնքների և կազմակերպությունների ՔՊ պլանների ու պլան-ժամանակացույցերի ճշգրտում | Մինչև 11.03 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 8.3 | «ՀՀ Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության պլանի» ճշգրտում | Մինչև 19.06 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 8.4 | «ՀՀ Լոռու մարզի բնակչության տարահանման պլանի» ճշգրտում | Մինչև 28.08 | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 8.5 | «ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանի» ճշգրտում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 8.6 | «ՀՀ Լոռու մարզի կազմակերպությունների աղետների ռիսկի կառավարման պլանների» ճշգրտում և համաձայնեցում ՆԳՆ ՓԾ Լոռու ՄՓՎ հետ | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | Համապատասխան համայնքներ և կազմակերպու-թյուններ, ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 8.7 | ՀՀ Լոռու մարզի կազմակերպությունների աղետների ռիսկի կառավարման պլաններով նախատեսված աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | Համապատասխան համայնքներ և կազմակերպու-թյուններ, ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| **9. Ընդհանուր պատրաստություն** | | | | | | |
| 9.1 | ՀՀ Լոռու մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |
| 9.2 | Պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքացիական պաշտպանության հարցերով պատասխանատուների հետ սեմինար- | 4-րդ եռամսյակ | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պարապմունքների անցկացում | | | | | |

Հապավումներ՝

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
ՆԳՆ՝ ներքին գործերի նախարարություն
ՊՆ՝ պաշտպանության նախարարություն
ԱՌՆ՝ աղետների ռիսկի նվազեցում
ՄՓՎ՝ մարզային փրկարարական վարչություն
ՀՇՈՒ՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություն
ՇՈՒ՝ շտաբային ուսումնավարժություն
ՃԿՊԱ՝ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա

ԱԻ՝ արտակարգ իրավիճակներ
ՔՊ՝ քաղաքացիական պաշտպանություն
ՇՄՆ՝ շրջակա միջավայրի նախարարություն
ՓԾ՝ փրկարար ծառայություն
ՃԿԿ՝ ճգնաժամային կառավարման կենտրոն
ՀՓՋ՝ հրշեջ-փրկարարական ջոկատ
ԲՊ՝ բնակչության պաշտպանություն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

1/23/2026

X 

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493